Արտաշես ԲՈՅԱՋՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՇԻՐԱԿՈՒՄ 1926-1959թթ.

Շիրակում 1926-1959թթ. անցկացվել են վարչատարածքային սահմանների մի քանի փոփոխություններ: 1926թ. Լենինական գավառը, որի սահմանները գրեթե համընկել են ներկայիս Շիրակի մարզի սահմաններին, բաժանված է եղել 7 գավառակների (Աղբաբայի, Ղազանչիի, Դուզքյանդի, Քյավթառլուի, Մոլլա-Գյոքչայի, Թալինի և Հաջի-Խալիլի), իսկ բնակավայրերի թիվը եղել է 197: 1930-ական թվականների սկզբներին գավառները՝ որպես վարչատարածքային միավորներ, հանրապետությունում լուծարվում են, և կազմավորվում են 37 վարչական շրջաններ: Լենինականի գավառի լուծարված գավառակների փոխարեն ստեղծվում են Արթիկի, Անիի, Ախուրյանի, Ամասիայի, Ղուկասյանի (Աշոցքի), Ծաղկահովիտի և Թալինի շրջանները[1]:

1920-50-ական թվականներին Հայկական ԽՍՀ-ում անցկացվել է համամիութենական հինգ մարդահամար (1926, 1931, 1937,1939 և 1959թթ.): Ի դեպ, 1931թ. մարդահամարը կոչվել է «Փոքրահասակների մարդահամար և մեծահասակների գրագիտության հաշվառում»: Մարդահամարների անցկացումը սովորաբար մեծ ֆինանսական ծախսեր է պահանջում: Հայտնի է, որ 1926թ. մարդահամարը անցկացնելու համար Լենինականի գավառին հատկացվել է 9409 ռուբլի[2]: Հատկանշական է, որ կարևորության տեսակետից բնակչության հաշվառումը չի զիջել զինվորական գործին: Նկատի ունենալով մարդահամարի հարցաթերթերի լրացման կարևորությունը՝ որպես հաշվարարներ ու հրահանգիչներ այդ գործում ընդգրկվել է գերազանցապես մտավորականությունը՝ ուսուցիչներ, ուսանողներ և պետական ծառայողներ[3]:

Առանձնապես բարձր կազմակերպվածությամբ աչքի է ընկել 1931թ. Լենինականում անցկացված մարդահամարը, որի աշխատանքների ղեկավարությունը և վերահսկողությունն իրականացրել են հանրապետության Լուսժողկոմատին կից ձևավորված հանձնաժողովը, իսկ շրջաններում՝ նույն ժողկոմատի սոցիալ-մշակութային բաժինների կազմավորած հանձնաժողովները: Բնակչությունը մարդահամարի անցկացման մասին նախօրոք տեղեկացվել է մամուլի, ռադիոյի և ազդագրերի միջոցով[4]:

Լենինականի գավառի բնակչության հաշվառումները երբեմն ընթացել են արտակարգ պայմաններում: Այդպես է եղել մասնավորապես 1926թ. հոկտեմբերի աղետալի երկրաշարժից հետո, երբ Լենինական քաղաքից ժամանակավոր հեռացողների թիվը կազմել է 12 հազար մարդ[5]: Դրանով էր նաև պայմանավորված, որ Լենինականի գավառի վիճակագրական բյուրոյի 1928թ. մարտի 20-ին հրավիրած հատուկ խորհրդակցության ժամանակ քննարկվել է քաղաքի բնակչության թվաքանակի ճշգրտման հարցը: Այդ նիստին ներկա են գտնվել երկրաշարժի հետևանքով բնակչության մեծամասշ-

---

[1] *Հայաստանի ազգային ատլաս, Եր., 2007թ. էջ 111-114:*
[2] *Հայաստանի ազգային արխիվի Շիրակի մարզային մասնաճյուղ ֆ.9,գ.1,գ.1, թ. 57:*
[3] *Նույն տեղում, թ. 58:*
[4] *Նույն տեղում, գ.101, թ. 5:*
[5] *Նույն տեղում, ֆ. 7, գ. 1, գ. 16, թ. 24:*

տար արտագաղթին լավատեղյակ մասնագետներ (Լենինականի արհմիութենական բյուրոյի ներկայացուցիչ Գ. Ղամբարյանը, քաղաքային կացության ակտերի գրանցման գրասենյակի վարիչ Ս. Ղասաբյանը, հասցեների սեղանի վարիչ Հ. Հակոբյանը, գավգործկոմի կազմակերպչական բաժնի ավագ տեղեկատու Ա. Ամատունին, տեղտնտբաժնի վարիչ՝ Գ. Սարգսյանը, գավվիճբյուրոյի վարիչ՝ Գ. Ասրյանը և վիճակագիր Ա. Ասատրյանը)[6]: Ըստ Գ. Ասրյանի զեկուցման՝ 1923թ. համաքաղաքային վիճակագրության տվյալներով Լենինականի բնակչության թիվը կազմել է 48086 մարդ, իսկ 1926թ. դեկտեմբերի 17-ի մարդահամարի տվյալներով՝ 42313 մարդ[7]: Այսինքն՝ այդ երեք տարիների ընթացքում քաղաքի բնակչության բացարձակ թիվը նվազել է 5773 մարդով կամ 12 %-ով: Իսկ թե ինչքան էր Լենինականի բնակչության թվաքանակը 1928թ., մասնագետները միասնական կարծիք չունեին: Քաղաքի բնակչության թվաքանակի հարցի քննարկումը տարակարծություններ ծնեց խորհրդակցության մասնակիցների մեջ, սակայն ի վերջո ընդունվեց որոշում, որի համաձայն՝ մինչև 1928թ. հունվարի 1-ը Լենինականում ապրել է 48 հազար բնակիչ[8]: Երեք տարի անց1931թ. մարդահամարի տվյալներով Լենինականի մշտական բնակչության թիվը 59075 մարդ էր[9]: Այսինքն՝ նախորդ երեք տարիների ընթացքում քաղաքի բնակչությունն ավելացել էր 11075 մարդով կամ 23,1%-ով: Նշենք, որ 1928-1931թթ. քաղաքի բնակչության թիվը բնական աճի հաշվին ավելացել է 4041 մարդով[10], իսկ մնացածը ներգաղթի հաշվին էր:

Աղյուսակ 1. Շիրակի բնակչության թվի շարժընթացը 1926-1959թթ.[11]

Վարչական միավոր	քաղաքի կարգավիճակ ստանալու տարեթիվը	Բնակչության թիվը (մարդ)				
		1926թ.	1931թ.	1939թ.	1959թ.	Բնակչության աճի միջին տարեկան տեմպը 1939-1959թթ. (%)
Քաղաք	.	*42313*	*59075*	*75463*	*122235*	*+3,1*
Լենինական	1840թ.	42312	59075	67729	108446	+3,0
Արթիկ	1945թ.	-	-	6978	9071	+1,5
Անիպեմզա	1938թ.	-	-	756	1119	+2,9
Ժեմզաշեն	1958թ.	-	-	-	3599	-
Տարածաշրջան		*96758*	*115271*	*107861*	*90413*	*-0,8*

[6] *ՀԱԱ Շիրակի մարզային մասնաճյուղ ֆ. 7, ց. 1, գ. 42, թ. 24:*
[7] *Նույնը:*
[8] *Նույնը:*
[9] *ՀԽՍՀ շրջանները, կենտրոնական քաղաքներն ու բնակավայրերը (1935թ. նոր սահմաններում ըստ 1931թ. մարդահամարի), Եր.,1935, էջ 24: Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, Եր., 2008:*
[10] *ՀԱԱ Շիրակի մարզային մասնաճյուղ, ֆ. 7, ց. 1, գ. 19, թ. 24:*
[11] *Պոտոսյան Ա., Հայաստանի հանրապետության գյուղական տարաբնակեցումը,Եր., 1999թ., էջ 183-187,193-201: Հայաստանի Ազգային ատլաս, Եր.,2007,էջ111-114: ՀՍԽՀ շրջանները, կենտրոնական քաղաքներն ու բնակավայրերը (1935թ. նոր սահմաններում ըստ 1931թ. մարդահամարի), Եր.,1935,էջ16-34: Հայաստանի հանրապետության բնակավայրերի բառարան, Եր., 2008:*

Ախուրյան		32256	37704	34557	32086	-0,3
Աշոցք		11260	14577	16244	9685	-2,0
Արթիկ		26507	30236	25379	21735	-0,7
Անի		17575	19624	17338	14635	-0,5
Ամասիա		9160	13130	14343	12272	-0,7
Ընդամենը		*139071*	*174346*	*183324*	*212648*	*+0,8*

1926թ. համամիութենական մարդահամարի տվյալներով Շիրակում ապրում էր 139071 մարդ, 1931թ.՝ 173346, 1939թ.՝ 183324 և 1959թ.՝ 212648 բնակիչ (տե՛ս աղյուսակ 1): 1926-ից մինչև 1959 թվականը Շիրակի բնակչության թվաքանակը 1,5 անգամ ավելացել էր, ընդ որում՝ քաղաքային բնակչությանը՝ 2,9 անգամ, մինչդեռ գյուղական բնակչության թիվը պակասել էր:

Աղյուսակ 1-ից երևում է, որ 1926-1959թթ. ընկած ժամանակահատվածում Շիրակի բնակչության աճի տարեկան միջին տեմպը կազմել է 1,6 %, ինչը զիջել է հանրապետական միջին ցուցանիշին[12]: Համեմատության համար նշենք, որ 1926-1931թթ. բնակչության տարեկան միջին աճի տեմպն ավելի բարձր է եղել[13]: Սկսած 1926թվականից՝ Շիրակի գյուղական բնակչության բացարձակ թվաքանակը սկսել է նվազել, իսկ քաղաքային բնակչությանը՝ ավելանալ: Սակայն նրա ոչ բոլոր տարածաշրջաններում է, որ գյուղական բնակչության թիվը պակասել է: Այսպես, հիմնականում աղբրեջանաբնակ Ամասիայի տարածաշրջանի բնակչության թվաքանակը քննարկվող ժամանակահատվածում ավելացել է 3112-ով կամ 33,3%-ով, իսկ հայաբնակ մյուս չորս տարածաշրջանում պակասել է 9457-ով կամ 9,8 %-ով: Շիրակի քաղաքային բնակչությունն աճել է արագ տեմպով: Եթե 1926թ. քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությունը կազմում էր 31,3 և 68,7 %, ապա 1959թ.՝ համապատասխանաբար՝ 57,5 և 42,5%: Այսինքն՝ քաղաքային բնակչության աճի ցուցանիշը գրեթե կրկնակի գերազանցել է հանրապետության քաղաքային բնակչության ընդհանուր աճի ցուցանիշը[14]:

Քննարկվող ժամանակահատվածում Լենինականի բնակչության թվաքանակը 2,6 անգամ է ավելացել[15], իսկ Արթիկ, Անիպեմզա և Պեմզաշեն նորաստեղծ քաղաքների բնակչության թվաքանակը համապատասխանաբար՝ 2,9 անգամ (վերջին երկուսն այժմ ունեն գյուղական համայնքի կարգավիճակ)[16]: Սակայն նշենք, որ մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածներում Շիրակի քաղաքային և գյուղական

---

[12] *Ավագյան Գ., Հայկական ՍՍՀ բնակչությունը, Եր. 1975, էջ 35:*

[13] *Բոյաջյան Ա., Ալեքսանդրապոլ-Լենինական գավառի ժողովրդագրական դրությունը 1914-1930-ական թթ., ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.12, Գյումրի, 2009, էջ 127:*

[14] *Ավետիսյան Խ., Սովետական Հայաստանի բնակչության և բնակավայրերի աշխարհագրություն, Եր., 1987, էջ137:*

[15] *Բոյաջյան Ա., Ալեքսանդրապոլ-Լենինականի բնակչության թվի շարժը 1900-1970թթ., ԳԱՍ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.5, Գյումրի, 2002, էջ 198:*

[16] *Բոյաջյան Ա., Աջամօղլյան Ա., Ժողովրդագրական գործընթացները Շիրակի մարզի քաղաքային բնակավայրերում (XXդ. վերջ, XXIդ. սկիզբ), Աշխարհագրության գիտակառուցողական ներուժը և գործնական կիրառումը (Լ. Վալեսյանի ծննդյան 80 և գիտամանկավարժական գործունեության 55- ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր), Եր., 2011, էջ 40:*

բնակչության աճի տարեկան միջին տեմպերը տարբեր են եղել և զիջել են հանրապետական ցուցանիշներին: Այդ են վկայում աղյուսակ 2-ում բերված թվային տվյալները:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում բնակչության թվի շարժընթացի փոփոխությունը 1939-1949թթ. ընկած ժամանակահատվածում: Ընդհանուր առմամբ Խորհրդային Հայաստանի բնակչությունը 1941-1945թթ. նվազել է 174 հազար մարդով (1941թ. 1360,9 հազարի դիմաց կազմել է 1186,9 հազ. մարդ)[17], իսկ Շիրակում՝ 18 հազարով, որից 8 հազար լենինականցիներ զոհվել են Հայրենական պատերազմում[18]: Լենինական քաղաքի բնակչության թիվը 1949թ. կազմել է 90090 մարդ[19], ինչը 22361-ով, կամ 33,0 %-ով ավելի է 1939թ. համեմատությամբ: Քաղաքի բնակչության թվաքանակի նման աճը բացատրվում է հիմնականում 1946-1947թթ. սփյուռքահայերի ներգաղթով[20]:

Աղյուսակ 2. Շիրակի բնակչության աճի տարեկան միջին տեմպը (տոկոսներով) 1926-1959թթ.[21]

Տարեթվեր	Բնակչության աճի տարեկան միջին տեմպը (տոկոսով)					
	Շիրակ	Հայաստանի հանրապետություն	Շիրակի քաղաքային բնակչություն	ՀՀ քաղաքային բնակչություն	Շիրակի գյուղական բնակչություն	ՀՀ գյուղական բնակչություն
1926-1931թթ.	5,1	3,8	7,9	10,9	3,8	4,7
1931-1939թթ.	0,6	2,8	3,5	5,2	-0,8	0,5
1939-1959թթ.	0,8	1,8	3,1	7,0	-0,8	-0,2

Ընդհանուր առմամբ բնակչության վերարտադրումը պայմանավորված է բնական աճով, որն իր թվային արտահայտությունն է գտնում կոնկրետ ժամանակահատվածում՝ մեկ տարում ծնվածների և մահացածների թվի տարբերության մեջ: Ծնելիությունը կենսաբանական և միևնույն ժամանակ սոցիալ-տնտեսական երևույթ է, որի էքստրաժողովրդագրական հետազոտությունը կարևոր նշանակություն ունի բնակչության շարժընթացը բնութագրելու, վերարտադրության օրինաչափությունները բացահայտելու, նրա սեռատարիքային կազմը հաշվարկելու համար:

Խորհրդային Հայաստանի 1920-50-ական թվականների բնակչության ծնելիության օրինաչափություններն ուսումնասիրված են Զ. Կորկոտյանի, Ա. Գարամյանի, Հ. Թու-

---

[17] *Ավագյան Գ., Հայկական ՍՍՀ բնակչությունը, Եր., 1975, էջ 35-36:*

[18] *ՀԱԱ Շիրակի մարզային մասնաճյուղ, ֆ. 9, ց. 1, գ. 39, թ. 28:*

[19] *Նույն տեղում, թ. 10:*

[20] *Բոյաջյան Ա., Հայրենադարձությունը Լենինականում 1946-1947թթ. (ըստ ՀՀ Շիրակի տարածքային բաժնի նյութերի), Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, հանրապետական յոթերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2007, էջ 165-170:*

[21] *Պոտոսյան Ա., Հայաստանի հանրապետության գյուղական տարաբնակեցումը, Եր., 1999, էջ 183-187,193-201: Հայաստանի ազգային ատլաս, էջ 111-114: ՀԽՍՀ շրջանները, կենտրոնական քաղաքներն ու բնակավայրերը…., էջ 16-34: Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, 2008: Սովետական Հայաստանը 50 տարում, Եր., 1970, էջ 31: Ավետիսյան Խ., 1987, էջ137:*

մանյանի, Ռ. Սիֆմանի[22], Վ. Խոջաբեկյանի,[23] մասամբ նաև Գ. Ավագյանի և Խ. Ավետիսյանի կողմից[24]: Նույնը չի կարելի ասել Շիրակի մասին, որի այդ շրջանի բնակչության ծնելիության օրինաչափությունները գրեթե ուսումնասիրված չեն:

Լենինականի գավառային գործադիր կոմիտեն իր 1926թ. օգոստոսի 15-ի նիստում որոշում ընդունեց այն մասին, որ ծնունդները քաղաքային և գավառակային կենտրոնների քաղաքացիական ակտերի գրանցման գրասենյակներում գրանցվեն յոթ օրվա ընթացքում, իսկ մահերը՝ երեք: Միաժամանակ սահմանվեց, որ եթե ծնողները կամ ընտանիքի չափահաս անդամները գրանցող ծառայություններից թաքցնեն ծնվածների և մահացածների մասին տեղեկությունները, ապա կտուգանվեն 1-10 ռուբլի [25]: Այդ որոշման ընդունումից հետո կտրուկ նվազեց ծնունդները կամ մահերը գրանցել տալուց խուսափողների թիվը՝ հակառակ չգրանցելու օգտին հոգևորականների հորդորի[26]:

1920-50-ական թվականներին Հայաստանի և Շիրակի բնակչության՝ 1000 մարդու հաշվով ծնվածների թիվը ներկայացնենք աղյուսակով:

Աղյուսակ 3. Բնակչության 1000 մարդու հաշվով ծնելիության շարժընթացը 1926-1959թթ.[27]

Տարեթվեր	1000 մարդու հաշվով ծնվածների թիվը	
	Հայաստանի Հանրապետություն	Շիրակ
1926-1930 թթ.	56,1	56,7
1931-1935 թթ.	44,6	48,9
1936-1940 թթ.	43,6	47,4
1941-1945 թթ.	23,0	26,5
1946-1950 թթ.	29,3	32,3
1951-1955 թթ.	39,9	36,3
1956-1959 թթ.	40,1	33,5

Աղյուսակ 3-ի տվյալները ցույց են տալիս, որ 1926-1950թթ.Շիրակի բնակչության ծնելիության գործակիցը եղել է ավելի բարձր, քան ամբողջ հանրապետությանը: Ի դեպ, Խորհրդային Հայաստանում, այդ թվում՝ Շիրակում, այն գրեթե միշտ ավելի բարձր է եղել, քան նախախորհրդային շրջանում[28]: Բացառություն են կազմում 1941-1950թթ., երբ հայրենի պատճառներով գրանցվել է ծնունդների թվի կտրուկ նվազում:

1926-1930թթ. տնտեսության վերականգնման ավարտման, արդյունաբերականացման և գյուղի կոլեկտիվացման նախօրյակին Շիրակի, հատկապես Լենինականի բնակչության ծնելիության գործակիցը հասավ իր գագաթնակետին՝ կազմելով 56,7

---

[22] *Դավթյան Լ., Սովետական Հայաստանի բնակչության վերարտադրությունը, Եր., 1965, էջ 81:*
[23] *Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը (XIX-XX դարերում XXI դարի շեմին), Եր., 2001:*
[24] *Ավագյան Գ., 1975: Ավետիսյան Խ., 1987:*
[25] *ՀԱԱ Շիրակի մարզային մասնաճյուղ ֆ. 9, ց. 1, գ. 6, թ. 9:*
[26] *ՀԱԱ Շիրակի մարզային մասնաճյուղ, ֆ. 7, ց. 1, գ. 16, թ. 12:*
[27] *Խոջաբեկյան Վ., 2001, էջ 144: Դավթյան Լ., 1965, էջ 82-85, Բոյաջյան Ա., 2002, էջ 197-204: ՀԱԱ Շիրակի մարզային մասնաճյուղ ֆ. 7, ց. 1, գ. 6, թ. 100, ֆ. 7, ց. 1, գ. 9, թ.38-39, ֆ. 9, ց.1, գ. 19, թ.1-7; Экономика и культура Ленинакана, Ленинакан, 1984, стр. 15.*
[28] *Դավթյան Լ., 1965, էջ 83:*

պրոմիլն (1000 մարդու հաշվով ծնվածների թիվը), ինչը բացատրվում է ոչ միայն կենսապայմանների բարելավմամբ, այլև «փոխհատուցողական ծնելիության» երևույթով:

1930-ական թվականներից ԽՍՀՄ-ում, այդ թվում՝ Հայաստանում, նաև Շիրակում նկատվում է ծնելիության աստիճանական նվազում: Վերջինս կանխելու նպատակով 1936թ. ընդունվում է օրենք, որտեղ հղիության արհեստական կասեցումը դիտվում է որպես քրեական հանցագործություն[29]: Հետպատերազմյան տարիներին (1945-1959թթ.) ծնունդների թիվը աճել է, ինչը նորից բացատրվում է «փոխհատուցողական ծնելիությամբ»: Շիրակում ծնելիության հետպատերազմյան երկարատև աճի մյուս պատճառն այն էր, որ ակտիվ վերարտադրության գործընթաց են մտել 1926-1935թթ. ծնվածները: Նշված ժամանակահատվածում ծնվածները տեսակարար մեծ կշիռ ունեին բնակչության ամբողջ թվաքանակում: Այսպես, 1931թ. մարդահամարի արդյունքներով Շիրակի ամբողջ բնակչության 41,2%-ն ունեցել է մինչաշխատունակ (մինչև 15 տարեկան*), 56,1%-ը՝ աշխատունակ (15-64), և 2,7%-ը՝ կենսաթոշակային տարիք: Դրանք Լենինականում կազմել են համապատասխանաբար՝ 36.8, 60.9 և 2.3 %[30]:

Հատկանշական է, որ ծնելիության ընդհանուր գործակիցը, աճելով հանդերձ, այնուամենայնիվ չի հասնում նախապատերազմյան մակարդակին: Հետաքրքրական կլիներ պարզել, թե տարածաշրջաններում և Լենինական քաղաքում ծնելիության նախապատերազմյան ցուցանիշները ինչպիսին են եղել: Այդ նպատակով բերենք մի քանի տվյալներ. 1927թ. Շիրակում ծնելիության ամենաբարձր ցուցանիշ գրանցվել է Մալլա-Գյոքչա գավառակում (ներկայիս՝ Անիի տարածաշրջան), որտեղ ընդհանուր գործակիցը կազմել է 56,0 պրոմիլն, ամենացածրը գրանցվել է Քյավթառլուի գավառակում (ներկայիս՝ Արթիկի տարածաշրջան)՝ 44,7, իսկ Լենինական քաղաքում՝ 45,9 պրոմիլն[31]: 1959թ. ծնելիության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Ամասիայի շրջանում՝ 42.5 պրոմիլն, ամենացածրը՝ Ախուրյանի շրջանում 32,1[32], իսկ Լենինականում՝ 32,9 [33]:

Ծնունդների իրական մակարդակը երևան է հանում կանանց՝ երեխաներ ունենալու պոտենցիալ հնարավորությունը: Ժողովրդագրության մեջ որպես ծննդաբերական տարիք պայմանականորեն սահմանված է 15-49 տարեկան կանանց խումբը: Բավական է նշել, որ Շիրակում 1926-1939թթ. պտղաբերության ամենաակտիվ տարիքային խումբը 16-27 տարեկան կանայք են, իսկ արդեն 1950–ական թվականներին՝ 21-34 տարեկան կանայք[34]: Եթե 1931թ. մարդահամարին կանանց ընդհանուր թվում 16-27 տարեկանները կազմում էին 22,5%[35], ապա 1949թ.՝ 15,7% և 1959թ.-ին՝ միայն 13,8%[36]: Միանգամայն պարզ է, որ ծնունդների թվի նվազումը, սկսած 1930-ական թվականներից, պայմանավորված է նաև կանանց վաղ ամուսնության նվազմամբ:

---

[29] *Воспроизводство населения СССР, под ред. Вишневского А. и Волкого А., М., 1983, стр. 174.*

* *Սա բնակչության այն տարիքային խումբն է, որը հետպատերազմյան տարիներին մուտք է գործել ակտիվ վերարտադրության տարիք:*

[30] *ՀԱԱ Շիրակի մարզային մասնաճյուղ ֆ. 9, գ. 1, գ. 96, թ. 3:*

[31] *ՀԱԱ Շիրակի մարզային մասնաճյուղ ֆ. 9, գ. 1, գ.19, թ. 1-28:*

[32] *Նույն տեղում, գ. 29, թ. 75:*

[33] *Բոյաջյան Ա., 2002, էջ 199:*

[34] *ՀԱԱ Շիրակի մարզային մասնաճյուղ, ֆ. 7, գ. 2, գ. 6, թ. 24, ֆ. 9, գ. 1, գ. 19, թ. 15:*

[35] *Նույն տեղում, ֆ. 9, գ. 1, գ. 96, թ. 3:*

[36] *Նույն տեղում, ֆ. 10, գ. 2, գ.13, թ. 17:*

Ամփոփելով վերը շարադրվածը՝ գալիս ենք այն եզրակացության, որ Շիրակի մարզի բնակչության թվի աճը և ծնելիության մակարդակը 1920-30-ական թթ. միշտ էլ բարձր են եղել, իսկ 1940-50-ական թթ., պայմանավորված Հայրենական պատերազմով և ապա՝ արագընթաց ուրբանիզացմամբ (քաղաքային բնակչության տեսակարար կշռի մեծացմամբ) ծնելիության գործակիցն աստիճանաբար նվազում է:

ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В ШИРАКЕ В 1926-1959 гг.

___ *Резюме* ____ ___ *А. Бояджян* ___

Рост численности и уровень рождаемости населения Ширака в 1920-30гг. был высоким, а в 1940-50-е гг., в связи с Отечественной войной и интенсивной урбанизацией, показатель рождаемости населения иостепенно снижается. 1926-1959 гг. численность населения Ширака увеличилась 1,5 раза, в том числе городская – на 2,9 раза, а сельское население, наоборот, стало уменьшаться. В 1926-1959 гг. среднегедевой темп роста численности населения Ширака составил 1,6%, что уступает республиканскому среднему показателю.